ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 553 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 165-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 165-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետում «մեկամյա» բառը փոխարինել «տասնչորսամյա» բառով.

2) որոշման հավելվածի ցանկի 2-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	2.	Փորձագիտական կենտրոնի շենք, ավտոտնակ	Ք. Երևան, Կենտրոն Լեոյի փողոց 7/3	434.1	160 517 288	0.08028	20 350 980	160 517 288	58092	09.07.2019 թ.	»:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում «Լեո Կոնստրակշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն բանկային վավերապայմանները ներկայացնելուց հետո պետական սեփականություն հանդիսացող՝ քաղ. Երևան,

Կենտրոն, Լեոյի փողոց 7/3 (նախկին հասցե քաղ. Երևան, Կենտրոն, Լեոյի փողոց 7) հասցեում գտնվող գույքի օտարման նպատակով կազմակերպված մրցույթում հաղթող ճանաչված ընկերությանը վերադարձնել վերջինիս կողմից վճարված գումարներից 1 929 393 դրամ, որից՝

1) պետական սեփականություն համարվող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր՝ 900005029013 հաշվից՝ 1 620 123 դրամ.

2) շենք, շինությունների օտարման գործընթացում պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից մուտքեր՝ 900005290003 հաշվից՝ 309 270 դրամ:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում պետական սեփականություն հանդիսացող՝ քաղ. Երևան, Կենտրոն, Լեոյի փողոց 7/3 (նախկին հասցե քաղ. Երևան, Կենտրոն, Լեոյի փողոց 7) հասցեում գտնվող գույքի օտարման նպատակով կազմակերպված մրցույթում հաղթող ճանաչված ընկերությանը վերադարձնել վերջինիս կողմից Երևան համայնքի թիվ 900018211020 հաշվին վճարված գումարից 694 339 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ